



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 16 ՄԱՐՏ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՁ

(միասնաբար արտասանուած)

Իմաստագրութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստագրութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴԻՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.
քու անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի:
Ամբողջութեամբ մաքրէ զիս իմ անօրէնութենէս, եւ իմ մեղքես զիս սրբէ:
Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքես չ'ելլեր:
Քեզի, միայն քեզի դեմ մեղանչեցի, Տէր,
գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:
Ուստի արդար ես, ինչ վճիռ ալ արձակես.
իրաւացի ես, ինչ պատիժ ալ սահմանես:
Ուստի ներումիդ ցօղով սրբէ զիս, եւ պիտի մաքրուիմ,
լուա զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:
Յնծութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի,
եւ տառապած ոսկորներս պիտի ցնծան:
Նկատի մի՛ առնէր մեղքերս, ներէ բոլոր յանցանքներս:
Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ով Աստուած,
Նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:
Ներկայութենէս մի՛ զրկէր զիս, Տէր, եւ քու Սուրբ Հոգիդ թող չլքէ զիս:
Փրկութեանդ ցնծութիւնը տուր ինձի,
եւ քու կամքիդ հնազանդ հոգի դիր իմ մէջս:
Որպէսզի անօրէններուն սորվեցնեմ քու կամքդ,
եւ մեղաւորները քեզի դառնան:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐՁ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՂՈՐՁ

Պահապան ամեն այնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹԸ



ԵԼԻՑ Ի (20) ԳԼՈՒԽ



ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ (20:14)

Պապուիրանը կը շարունակուի: Եօթներորդ պապուիրան.

«Շնորհին մի՛ ընէր»: Այսպէղ նախ ամէն բանէ առաջ պարզենք բառի գործածութիւնը: Ընդհանրապէս երկու բառեր կան որոնք կը գործածուին՝ «պոռնկութիւն» եւ «շնորհութիւն», որ պէտք չէ շփոթել իրարու հետ: Պոռնկութիւնը մարմնիկի հետ կապուած արարք մըն է: Նոր Կրակարանին մէջ կը կարդանք. «Մէկ մեղք է, որ մարմինը կը պղծէ, միւս մեղքերը մարմինէն դուրս են» այդ ալ պոռնկութիւնն է: Իսկ շնորհութիւնը ամուսնական յարաբերութենէն դուրս եղող ռեւէ մէկ անհաւարարմութիւնը կը կոչուի շնորհութիւն, կնոջ թէ այդ մարդու պարագային: Հետեւաբար, շնորհութիւնը հաւարարմութեան դէմ ուղղուած մեղք մըն է: Յիսուս աւելի բացայայտելով, քիչ մըն ալ անդին կ'երթայ ըսելու համար, թէ նոյնիսկ ռեւէ սեռային ցանկութիւն միտքէն անցնելն անգամ շնորհութիւն կը սեպուի: Ուրեմն, շնորհութիւնը առաջին հերթին մրաժողութեան հարց է: Բայց նաեւ կայ մէկ այլ երես մը, որ ամէն մրաժում որ կ'անցնի մեր մտքէն, անպայմանօրէն շնորհութիւն չէ, որովհետեւ փորձութիւնը ինքնին մեղք չէ: Օրինակ, երբ գեղեցիկ կին մը կը տեսնենք, որոշ գրգիռներ կ'ունենանք, բայց այդ գրգիռները փակուին մեղք չեն, ամբողջական հասկացողութեամբ, այլ՝ երբ մտքով հաւանութիւն կու տանք անոնց, այլ խօսքով, կ'ենթարկուինք, առիթ կու տանք, այն արեւն մեղքը մութք կը գործէ մեր մէջ, իսկ երբ գործադրուի՝ մահուան պարճառ կ'ըլլայ (Յակոբոս 1):

Այնպէս ինչպէս միւս պապուիրաններուն, այս պապուիրանին պարագային եւս, շնորհութիւնը թէւ մարմնական կապ մըն է, սակայն Աստուածաշունչին մէջ ունի երկրորդ, հոգեւոր երեսը, որ մարդուն կողմէ ցուցաբերած ռեւէ անհաւարարմութիւն Աստուծոյ հանդէպ, դարձեալ կը կոչուի շնորհութիւն: Որովհետեւ Աստուծոյ եւ մարդուն միջեւ կապը կ'արտայայտուի ամուսնական՝ այդ եւ կնոջ կապով:

Այս վիճակներէն ձեռքազատուելու համար կը պահանջուի զոջում, խոստովանութիւն, ապաշխարութիւն: Նախապէս մեղքով ապրած մարդ մը, երբ ուղիղ եւ հարազատ զոջում, խոստովանութիւն եւ ապաշխարութիւն կ'ունենայ, կը նշանակէ թէ արդէն ինք իրմէ թօթափած է մեղաւոր մրաժողութիւնը: Բայց իբրեւ յիշարակ կրնան այդ մրաժողութիւնները երբեմն-երբեմն վերադառնալ, եւ այս մէկը մարդը փառապեցնող երեւոյթ մըն է: Մեղքերը զինք կը հանդիմանեն յաճախակի կերպով, բայց ապիկա կրնայ երկու բանի պարճառ ըլլալ. յաճախ հանդիմանութիւն զգալը, գիտակցօրէն կրնայ աւելցնել նաեւ այն բաժինը, որ նժարին միւս կողմէն է. «ուր որ մեղքը աւելցաւ, հոն նաեւ շնորհքը բազմացաւ» (Հռոմ 5:20): Ուրեմն, ան իր մեղքին ահաւոր ծանրութիւնները դարձեալ կրնայ յիշել եւ կրնան անոնք փառապեցնել զինք, բայց միաժամանակ առիթ կրնայ դառնալ որ յիշէ, թէ Աստուած ինչպիսի շնորհք ըրաւ այդ բոլորը իր կեանքէն դուրս բերելով: Մարդկային կեանքը այնպիսին է, որ մեքենական փոփոխութիւն չկայ, այսինքն՝ այս վայրկեանէն յաջորդը մէկ անգամէն ամէն ինչ կարելի չէ սրբել. փոփոխութեան որոշումը, վճիռը կրնայ մէկ վայրկեանի մէջ գալ եւ արիկա ըլլալ անդարձ, վերջնական վճիռ, բայց փոփոխութիւնը աստիճանական է որ տեղի կ'ունենայ, ժամանակ կը պահանջէ մինչեւ որ մարդ կամաց-կամաց վիճակի մը հասնի, ուր այլեւս անոնք իր կեանքէն ամբողջութեամբ վերանան եւ անցեալի այս փորձութիւնը կրնայ վերածուիլ փորձառութեան: